

ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Կառավարության
և

Թուրքմենստանի Կառավարության միջև
եկամուտների և գույքի
կրկնակի հարկումը բացառելու մասին

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը
և

Թուրքմենստանի Կառավարությունը,
ղեկավարվելով երկու Պետությունների միջև տնտեսական, գիտական, տեխնիկական
ու մշակութային համագործակցությունը զարգացնելու և ամրապնդելու ձգտումով և
եկամուտների ու գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը վերացնելու,
հարկերի վճարումից խուսափելը կանխելու և հարկային խտրականություն թույլ
չտալու նպատակով որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը և պայմանավորվեցին
ներքոհիշյալի մասին

Հոդված 1

ԱՆՉԻՆՔ, ՈՐՈՆՑ ՆԿԱՏԱՍԻՔ ԿԻՐԱՌՎՈՒՄ Ե ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐԸ

Սույն Համաձայնագիրը կիրառվում է Պայմանավորվող Պետություններից մեկի
կամ երկուսի ռեզիդենտներ հանդիսացող անձանց նկատմամբ:

Հոդված 2

ԸՆԴԳՐԿՎՈՂ ՀԱՐԿԵՐ

1. Սույն Համաձայնագիրը կիրառվում է Պայմանավորվող Պետության կամ նրա
իշխանության տեղական մարմինների կողմից եկամուտներից և գույքից գանձվող
հարկերի վրա, անկախ դրանց գանձման եղանակից:

2. Եկամուտներից ու գույքից գանձվող հարկեր են համարվում եկամուտների
ընդհանուր գումարից, գույքի ընդհանուր արժեքից կամ դրանց առանձին տարրերից,
ներառյալ շարժական կամ անշարժ գույքի օտարումից առաջացած եկամուտներից,
ձեռնարկությունների կողմից վճարվող աշխատավարձի կամ ռոճիկի ընդհանուր
գումարից, ինչպես նաև գույքի արժեքաճից գանձվող բոլոր հարկերը:

3. Սույն Համաձայնագրի գործողությունը տարածվում է, մասնավորապես,
հետևյալ գործող հարկերի վրա՝

ա) Հայաստանի Հանրապետությունում.

(i) շահութահարկ,

(ii) եկամտահարկ,

(iii) գույքահարկ,

(iv) հողի հարկ,

(հետագայում՝ «հայկական հարկ»):

բ) Թուրքմենստանում.

(i) շահույթի (եկամուտի) հարկ,

- (ii) եկամտահարկ ֆիզիկական անձանցից,
- (iii) հարկ ընդերքի օգտագործման համար,
- (iv) ձեռնարկությունների գույքի հարկ,
- (v) վճար հողի համար,
- (vi) հարկ տրամադրության միջոցների տերերից,
- (հետագայում՝ «Թուրքմենստանի հարկեր»)

4. Համաձայնագիրը կիրառվում է մաեւ բոլոր մնամատիպ կամ համանման հարկերի նկատմամբ, որոնք կգանձվեն ի լրումն գործող հարկերի կամ դրանց փոխարեն սույն Համաձայնագրի ստորագրման օրվանից հետո: Պայմանավորվող Պատվարությունների իրավասու մարմինները կձանուցեն միմյանց իրենց համապատասխան հարկային օրենսդրություններում մտցված էական փոփոխությունների մասին:

Հոդված 3 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար, եթե այլ բան չի բխում ենթատեքստից.

ա) «մի Պայմանավորվող Պետություն» եւ «մյուս Պայմանավորվող Պետություն» արտահայտությունները ենթատեքստից կախված նշանակում են Հայաստան կամ Թուրքմենստան,

բ) «Հայաստան» տերմինը նշանակում է Հայաստանի Հանրապետություն եւ, երբ օգտագործվում է աշխարհագրական իմաստով, ներառում է տարածք, ներառյալ ներքին ջրերը, որոնց նկատմամբ Հայաստանի Հանրապետությունը իրականացնում է ինքնիշխան իրավունքներ եւ իրավասություն՝ միջազգային իրավունքի նորմերին եւ ներքին օրենսդրությանը համապատասխան,

գ) «Թուրքմենստան» արտահայտությունը նշանակում է Թուրքմենստան եւ, երբ օգտագործվում է աշխարհագրական իմաստով, ներառում է Թուրքմենստանի տարածքային ջրերից դուրս գտնվող ցանկացած երկրամաս, որը, միջազգային իրավունքի եւ Թուրքմենստանի օրենսդրությանը համապատասխան, իրենից ներկայացնում է այնպիսի գոտի, որի սահմաններում Թուրքմենստանը կարող է իրականացնել իր իրավունքները ծովի հատակի, ընդերքի եւ դրանց բնական պաշարների նկատմամբ,

դ) «անձ» տերմինը ներառում է ֆիզիկական անձ, ընկերություն եւ անձանց ցանկացած այլ միավորում,

ե) «ընկերություն» արտահայտությունը նշանակում է ցանկացած կորպորատիվ կազմավորում կամ ցանկացած այլ կազմակերպություն, որը հարկման նպատակների համար դիտարկվում է որպես կորպորատիվ կազմավորում,

զ) «Մի Պայմանավորվող Պետության ձեռնարկություն» եւ «մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկություն» արտահայտությունները, ենթատեքստից կախված, նշանակում են Հայաստանի կամ Թուրքմենստանի օրենսդրությանը համապատասխան գրանցված ձեռնարկություն,

ց) «միջազգային փոխադրում» արտահայտությունը նշանակում է Պայմանավորվող Պետության ձեռնարկության կողմից շահագործվող ծովային, գետային մավով կամ օդանավով, ավտոմոբիլային կամ երկաթուղային տրամադրության միջոցով իրականացվող ցանկացած փոխադրում, բացառությամբ,

երբ այդպիսի փոխադրումն իրականացվում է բացառապես մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող կետերի միջև,

h) «իրավասու մարմին» արտահայտությունը նշանակում է.

i) Թուրքմենստանում՝ Էկոնոմիկայի եւ Ֆինանսների նախարարությունը եւ Գլխավոր պետական հարկային տեսչությունը կամ նրանց լիազոր ներկայացուցիչը,

(ii) Հայաստանում՝ Ֆինանսների նախարարությունը կամ նրա լիազոր ներկայացուցիչը,

i) «ազգային անձ» արտահայտությունը նշանակում է.

(i) Պայմանավորվող Պետության քաղաքացիությունն ունեցող ցանկացած ֆիզիկական անձ,

ii) ցանկացած իրավաբանական անձ, ընկերակցություն կամ ասոցացիա, որոնք ստացել են իրենց կարգավիճակը Պայմանավորվող Պետության գործող օրենսդրության հիման վրա:

2. Պայմանավորվող Պետության կողմից սույն Համաձայնագիրը կիրառելիս նրանում չսահմանված ցանկացած արտահայտություն կունենա այն նշանակությունը, որը նրան տրվում է այդ Պետության օրենսդրությամբ՝ այն հարկերի առնչությամբ, որոնց վրա տարածվում է Համաձայնագիրը, եթե այլ բան չի բխում ենթատեքստից:

Հոդված 4 ՌԵԶԻԴԵՆՏ

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար «մի Պայմանավորվող Պետության ռեզիդենտ» արտահայտությունը նշանակում է անձ, որը այդ Պետության օրենսդրությամբ այնտեղ ենթակա է հարկման բնակության վայրի, գրանցման վայրի, մշտական գտնվելու վայրի կամ այլ համանման չափանիշի հիման վրա: Այդ արտահայտությունը սակայն, չի ներառում անձին, որը ենթակա է հարկման այդ Պետությունում, միայն այդ Պետության աղբյուրներից եկամուտների կամ այդտեղ գտնվող գույքի առնչությամբ:

2. Այն դեպքում, երբ սույն հոդվածի 1 կետի դույթներին համապատասխան ֆիզիկական անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող Պետությունների ռեզիդենտ, նրա կարգավիճակը որոշվում է հետեւյալ կերպ.

a) նա համարվում է այն Պետության ռեզիդենտը, որտեղ ունի մշտական կացարան, եթե նա երկու Պետություններում էլ ունի մշտական կացարան, նա համարվում է այն Պետության ռեզիդենտը, որտեղ նա ունի ավելի սերտ անձնական եւ տնտեսական կապեր (կենսական շահերի կենտրոն):

b) եթե Պետությունը, որտեղ նա ունի կենսական շահերի կենտրոն չի կարող որոշվել կամ եթե նա Պետություններից եւ ոչ մեկում չունի մշտական կացարան, նա համարվում է այն Պետության ռեզիդենտը, որտեղ սովորաբար բնակվում է;

c) եթե նա սովորաբար բնակվում է երկու Պետություններում կամ եթե նա երկու Պետություններում էլ սովորաբար չի բնակվում, նա համարվում է այն Պետության ռեզիդենտը, ում քաղաքացին հանդիսանում է;

d) եթե Պայմանավորվող Պետություններից յուրաքանչյուրը նրան դիտարկում է որպես իր քաղաքացի, կամ եթե նա չի հանդիսանում դրանցից եւ ոչ մեկի քաղաքացի, ապա Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները տվյալ հարցը լուծում են փոխադարձ համաձայնությամբ:

3. Այն դեպքում, երբ սույն հոդվածի 1 կետի դրույթներին համապատասխան ֆիզիկական անձ չհանդիսացող անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող Պետությունների ռեզիդենտ, մա համարվում է այն Պետության ռեզիդենտ, որտեղ գրանցված է:

Հոդված 5 ՄՇՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար «մշտական հաստատություն» արտահայտությունը նշանակում է գործունեության մշտական վայր, որի միջոցով լիովին կամ մասնակիորեն իրականացվում է ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունը:

2. «Մշտական հաստատություն» արտահայտությունը մասնավորապես ներառում է.

- a) ղեկավարման վայրը;
- b) մասնաճյուղը;
- c) գրասենյակը;
- d) առևտրի վայրը;
- e) ֆարքիկան;
- f) արհեստանոցը;

g) հանքահորը, մավթի կամ գազի հորատանցքը, բարեհանքը կամ բնական պաշարների հետախուզման, մշակման կամ արդյունահանման ցանկացած այլ վայրը:

3. «Մշտական հաստատություն» արտահայտությունը ընդգրկում է նաև.

a) Շինարարական երապարակը, շինարարական, մոնտաժային կամ հավաքման օբյեկտը, կամ հիշատակված օբյեկտների հետ կապված հսկողական գործունեությունը, բայց միայն այն դեպքում, երբ դրանց հետ կապված աշխատանքների տևողությունը գերազանցում է տասներկու ամիսը;

b) ձեռնարկության ծառայությունների մատուցումը, ներառյալ խորհրդատվական ծառայությունները, այդ նպատակների համար ձեռնարկության վարձած ծառայողների կամ այլ անձնակազմի միջոցով, բայց միայն երբ այդ կարգի գործունեության տևողությունը (մեկ կամ մի քանի օբյեկտների համար) երկրի սահմաններում ընդհանուր առմամբ կազմում է ավելի քան տասներկու ամսյա ժամանակահատված կամ ժամանակահատվածներ:

4. Չնայած սույն հոդվածի մախորդ դրույթներին, մի Պայմանավորվող Պետության ձեռնարկության գործունեության հետեյալ տեսակները չեն դիտարկվում որպես մյուս Պայմանավորվող Պետությունում մշտական հաստատության միջոցով իրականացվող.

a) կառույցների օգտագործումը բացառապես ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պահպանման կամ ցուցադրման նպատակների համար;

b) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահումը բացառապես պահպանման կամ ցուցադրման նպատակների համար;

c) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահումը բացառապես այլ ձեռնարկության կողմից վերամշակման նպատակների համար;

դ) գործունեության մշտական վայրի պահումը բացառապես ձեռնարկության համար ապրանքների կամ արտադրանքի գնման կամ տեղեկությունների հավաքման նպատակով;

ե) գործունեության մշտական վայրի պահումը բացառապես ձեռնարկության համար մախապատրաստական կամ օժանդակ բնույթի ցանկացած այլ գործունեության իրականացման նպատակներով;

Ֆ) գործունեության մշտական վայրի պահումը բացառապես ա)-ից ե) ենթակետերում նշված գործունեության տեսակների ցանկացած համակցության իրականացման համար, պայմանով, որ գործունեության մշտական վայրի այդպիսի համակցության արդյունքում առաջացած ընդհանուր գործունեությունը ունի մախապատրաստական կամ օժանդակ բնույթ:

5. Չնայած սույն հոդվածի 1 եւ 2 կետերի դրույթներին, եթե անկախ կարգավիճակով գործակալ (որի մասին խոսվում է սույն հոդվածի 7 կետում) չհանդիսացող անձը գործում է Պայմանավորվող Պետությունում մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկության անունից, ապա այդ ձեռնարկությունը դիտարկվում է, որպես առաջինը հիշատակված Պետությունում մշտական հաստատություն ունեցող ցանկացած գործունեության առումով, որը այդ անձը ձեռնարկում է ձեռնարկության համար, եթե այդ անձը.

ա) առաջին հիշատակված Պետությունում ունի եւ սովորաբար օգտագործում է ձեռնարկության անունից կոնտրակտներ կնքելու լիազորություն, բացառությամբ, եթե այդ անձի գործունեությունը սահմանափակվում է սույն հոդվածի 4 կետում նշվածով, որը եթե եւ իրականացվել է գործունեության մշտական վայրի միջոցով, համաձայն սույն կետի դրույթների, չի վերածում մշտական գործունեության այդ վայրը մշտական հաստատության;

բ) չունի այդպիսի լիազորություններ, բայց սովորաբար ապրանքների եւ արտադրանքի պաշարներ է պահում առաջինը հիշատակված Պետությունում, որտեղից նա կանոնավոր դրանք մատակարարում է ձեռնարկությանը:

6. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին, կհամարվի որ Պայմանավորվող Պետության ապահովագրական ձեռնարկությունը, բացի վերապահովագրական դեպքերից, մշտական հաստատություն ունի մյուս Պայմանավորվող Պետությունում, եթե նա անկախ կարգավիճակով գործակալ չհանդիսացող անձի միջոցով, որին վերաբերվում է սույն հոդվածի 7 կետը, այդ մյուս Պետության տարածքում ապահովագրական մոծումներ է հավաքում կամ ապահովագրում է հնարավոր այնտեղ ռիսկից:

7. Ձեռնարկությունը չի դիտարկվում որպես Պայմանավորվող Պետությունում մշտական հաստատություն ունեցող, եթե միայն նա ձեռնարկատիրական գործունեությունը այդ Պետությունում իրականացնում է բրոքերի, կոմիսիոների կամ անկախ կարգավիճակով ցանկացած այլ գործակալի միջոցով, պայմանով, որ այդ անձինք գործում են իրենց սովորական գործունեության շրջանակներում: Սակայն, եթե այդպիսի գործակալի գործունեությունը լիովին կենտրոնացած է այդպիսի ձեռնարկության համար գործունեության վրա, ապա սույն կետի շրջանակներում նա չի դիտարկվի որպես անկախ կարգավիճակով գործակալ:

Մի Պայմանավորվող Պետության ձեռնարկության առնչությամբ «անկախ կարգավիճակով գործակալ» արտահայտությունը նշանակում է ֆիզիկական անձ, որը հանդիսանում է մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ եւ աշխատանքային հարաբերությունների մեջ չէ առաջինը հիշատակված Պետության ձեռնարկության հետ:

8. Այն փաստը, որ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը վերահսկում է մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ

հանդիսացող ընկերությանը կամ վերահսկվում է նրա կողմից, կամ որը այդ նյութի Պետությունում ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում (նշտական հաստատության միջոցով կամ այլ կերպ), ինքնին այդ ընկերություններից մեկին չի վերածում նյութի նշտական հաստատության:

Հոդված 6

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ

1. Եկամուտները, որոնք Պայմանավորվող Պետության ռեզիդենտը ստանում է նյութի Պայմանավորվող Պետությունում գտնվող անշարժ գույքից (ներառյալ եկամուտը գյուղացիական կամ անտառային տնտեսությունից), կարող են հարկվել այդ նյութի Պետությունում:

2. «Անշարժ գույք» արտահայտությունը պետք է ունենա այն մշակակությունը, որը նա ունի այն Պայմանավորվող Պետության օրենսդրությամբ, որտեղ գտնվում է դիտարկվող գույքը: Ծովային, գետային մավերը եւ օդամավերը, ավտոմոբիլային տրանսպորտը եւ երկաթգծի շարժակազմը որպես անշարժ գույք չեն դիտարկվում:

3. Սույն հոդվածի 1 կետի դրույթները կիրառվում են նաեւ անշարժ գույքի անմիջական օգտագործումից, վարձակալության տալուց կամ ցանկացած այլ ձեռով օգտագործելուց ստացվող եկամուտների նկատմամբ:

4. Եթե բաժնետոմսերի կամ ընկերությունում այլ կորպորատիվ իրավունքների տնօրինումը այդպիսի բաժնետոմսերի կամ կորպորատիվ իրավունքների տիրոջը տալիս է ընկերությանը պատկանող անշարժ գույքից օգտվելու իրավունք, ապա այդպիսի օգտվելու իրավունքի անմիջական օգտագործումից, վարձակալության տալուց կամ ցանկացած այլ ձեռի օգտագործումից եկամուտները կարող են հարկվել այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ գտնվում է անշարժ գույքը:

5. Սույն հոդվածի 1 եւ 3 կետերի դրույթները կիրառվում են նաեւ ձեռնարկության անշարժ գույքից եկամուտների եւ անկախ անհատական ծառայություններ մատուցելու համար օգտագործվող անշարժ գույքից եկամուտների նկատմամբ:

Հոդված 7

ՇԱՀՈՒՅԹ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

1. Պայմանավորվող Պետության ձեռնարկության շահույթը հարկվում է միայն այդ Պետությունում, եթե միայն այդպիսի ձեռնարկությունը չի իրականացնում ձեռնարկատիրական գործունեություն նյութի Պայմանավորվող Պետությունում՝ այնտեղ գտնվող նշտական հաստատության միջոցով: Եթե ձեռնարկությունը նյութի Պայմանավորվող Պետությունում ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ կերպ, ապա նրա շահույթը կարող է հարկվել նյութի Պետությունում, բայց միայն այն մասով, որը վերաբերվում է այդ նշտական հաստատությանը:

2. Հաշվի առնելով սույն հոդվածի 3 կետի դրույթները, այն դեպքում, երբ Պայմանավորվող Պետության ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում նյութի Պայմանավորվող Պետությունում՝ այնտեղ գտնվող նշտական հաստատության միջոցով, ապա յուրաքանչյուր Պայմանավորվող Պետությունում այդ նշտական հաստատությանն է վերագրվում այն շահույթը, որը նա կարող էր ստանալ, եթե նա լիներ առանձնացված կամ առանձին ձեռնարկություն զբաղված նույնպիսի կամ համանման գործունեությամբ նույնպիսի կամ համանման պայմաններում եւ գործեր միանգամայն անկախ ձեռնարկությունից, ում նշտական հաստատությունը նա հանդիսանում է:

3. Մշտական հաստատության շահույթը որոշելիս թույլատրվում է այդպիսի մշտական հաստատության նպատակների համար կատարված՝ փաստաթղթորեն հաստատված ծախսերի հանում, ներառյալ կառավարման հետ կապված ծախսերը, անկախ այն բանից՝ կատարված են դրանք այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը, թե նրա սահմաններից դուրս:

4. Զանի դեռ մի Պայմանավորվող Պետության օրենսդրությամբ մշտական հաստատությանը վերագրվող շահույթը կարող է որոշվել ձեռնարկության եւ նրա տարբեր ստորաբաժանումների միջեւ ընդհանուր շահույթի համաձայնական բաշխման հիման վրա, ապա սույն հոդվածի 2 կետի դրույթները այդ Պայմանավորվող Պետությանը չեն խոչընդոտի այդպիսի բաշխման միջոցով հարկվող շահույթը հաշվարկելու համար:

5. Ոչ մի շահույթ մշտական հաստատությանը չի հաշվեգրվի սուկ այդ մշտական հաստատության կողմից ձեռնարկության համար ապրանքներ կամ արտադրանք գնելու հիման վրա:

6. Նախորդ կետերի նպատակների համար, մշտական հաստատությանը վերագրվող շահույթը ամեն տարի որոշվում է միեւնույն եղանակով, եթե միայն այդ եղանակի փոփոխման համար չլինի ծանրակշիռ ու բավարար պատճառ:

7. Այն դեպքում, երբ շահույթը ներառում է եկամուտների տեսակներ, որոնց մասին առանձին խոսվում է սույն Համաձայնագրի այլ հոդվածներում, ապա սույն հոդվածի դրույթները այդ հոդվածների դրույթների նկատմամբ չեն կիրառվում:

Հոդված 8

ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄ

1. Պայմանավորվող Պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում ծովային, գետային նավերի կամ օդանավերի, ավտոմոբիլային կամ երկաթուղային տրանսպորտային միջոցների շահագործումից ստացվող շահույթը հարկվում է միայն այդ Պետությունում:

2. Պայմանավորվող Պետության ձեռնարկության կողմից ապրանքների եւ արտադրանքի փոխադրման համար օգտագործվող կոմտեյներների (ներառյալ տրեյլերները եւ կոմտեյներների փոխադրման համար այլ սարքավորումները) պահումից, օգտագործումից կամ վարձակալության տալուց ստացվող շահույթը հարկվում է միայն այդ Պետությունում:

3. Սույն հոդվածի 1 եւ 2 կետերի դրույթները կիրառվում են մաեւ տրանսպորտային միջոցների շահագործման միավորումում, համատեղ ձեռնարկությունում կամ միջազգային կազմակերպությունում մասնակցությունից շահույթի նկատմամբ, բայց միայն շահույթի այն մասով, որը վերագրվում է համատեղ գործունեությունում նրա ունեցած մասնաբաժնին:

Հոդված 9

ԱՍՈՑԻԱՑՎԱԾ (ԶՈՒԳՈՐԴՎԱԾ) ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այն դեպքում, երբ.

ա) Պայմանավորվող Պետության ձեռնարկությունը ուղղակի կամ անուղղակի մասնակցում է մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկության կառավարման, հսկման կամ գույքի մեջ, կամ

բ) միեւնույն անձինք ուղղակի կամ անուղղակի մասնակցում են մի Պայմանավորվող Պետության ձեռնարկության եւ մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկության կառավարման, հսկման կամ գույքի մեջ,

եւ յուրաքանչյուր դեպքում երկու ձեռնարկությունների միջեւ, մրանց առետրային եւ ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծվում կամ սահմանվում են պայմաններ, որոնք տարբերվում են մրանցից, որոնք կարող էին լինել երկու անկախ ձեռնարկությունների միջեւ, ապա ցանկացած շահույթ, որը կարող էր վերագրվել դրանցից մեկին, բայց այդ պայմանների սուկայության պատճառով մրան չի վերագրվել, կարող է մտցվել այդ ձեռնարկության շահույթի մեջ եւ համապատասխանաբար հարկվել:

2. Այն դեպքում, երբ մի Պայմանավորվող Պետություն այդ Պետության ձեռնարկության շահույթում ներառում եւ համապատասխանաբար հարկում է մի շահույթ, որի նկատմամբ մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկությունը ենթարկվել է հարկման այդ մյուս Պետությունում, եւ այդ կերպ ներառված շահույթը հանդիսանում է շահույթ, որը կվերագրվեր առաջինը հիշատակված Պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջեւ հարաբերությունները լինեին այնպիսին, ինչպես անկախ ձեռնարկությունների միջեւ, ապա այդ դեպքում այդ մյուս Պետությունը կկատարի այդ վերագրված շահույթի համապատասխան ճշտում: Այդպիսի ճշտումը որոշելիս հաշվի կառնվեն սույն Համաձայնագրի մյուս դրույթները, իսկ Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները, ամփրաժեշտության դեպքում փոխադարձաբար կխորհրդակցեն:

Հոդված 10 ՇԱՀԱՐԱԺԻՆՆԵՐ

1. Մի Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարվող շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն նման շահաբաժինները կարող են հարկվել նաեւ Պայմանավորվող Պետությունում, որի ռեզիդենտն է համարվում շահաբաժինները վճարող ընկերությունը, այդ Պետության օրենսդրությանը համապատասխան. բայց եթե ստացողը հանդիսանում է շահաբաժինների փաստացի սեփականատերը, ապա այդ կերպ գանձվող հարկը չպետք է գերազանցի.

ա) շահաբաժինների համախառն գումարի 5 տոկոսը, եթե փաստացի սեփականատեր-ընկերությունը հանդիսանում է շահաբաժիններ վճարող ընկերության հիմնադիր ֆոնդի անուվազն 25 տոկոսի սեփականատեր,

բ) շահաբաժինների համախառն գումարի 15 տոկոսը բոլոր մնացած դեպքերում:

Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները այդ սահմանափակման կիրառման եղանակը սահմանում են փոխադարձ համաձայնությամբ:

Այս կետը չի ազդում ընկերության շահույթի հարկման վրա, որտեղից վճարվում են շահաբաժինները:

3. «Շահաբաժիններ» արտահայտությունը սույն Համաձայնագրում օգտագործելիս նշանակում է եկամուտ բաժնետոմսերից կամ պարտապահանջ չհանդիսացող՝ շահույթին մասնակցելու իրավունք տվող այլ իրավունքներից, ինչպես նաեւ եկամուտ այլ կորպորատիվ իրավունքներից, որը ենթակա է մույնպիսի հարկային կարգավորման, ինչպես որ բաժնետոմսերից ստացվող եկամուտը՝ այն Պետության օրենսդրությանը համապատասխան, որի ռեզիդենտն է հանդիսանում շահույթի բաշխումն իրականացնող ընկերությունը:

4. Սույն հոդվածի 1 եւ 2 կետերի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, լինելով մի Պայմանավորվող

Պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող Պետությունում, որի ռեզիդենտն է շահաբաժիններ վճարող ընկերությունը, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով կամ այդ մյուս Պետությունում անկախ անձնական ծառայություններ է մատուցում այնտեղ գտնվող մշտական բազայից, եւ տիրումը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, իրոք վերաբերում են նման մշտական հաստատությանը կամ մշտական բազային: Այդ դեպքում, հանգանակներից կախված, կիրառվում են 7 կամ 14 հոդվածների դրույթները:

5. Այն դեպքում, երբ մի Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը շահույթ կամ եկամուտներ է ստանում մյուս Պայմանավորվող Պետությունից, այդ մյուս Պետությունը կարող է լրիվ ազատել այդ ընկերության կողմից վճարվող շահաբաժինները հարկումից, բացառությամբ եթե այդ շահաբաժինները վճարվում են այդ մյուս Պետության ռեզիդենտին, կամ եթե տիրումը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, իրոք վերաբերում է այդ մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատությանը կամ մշտական բազային, եւ ընկերության չբաշխված շահույթը չի կարող ենթարկել հարկման, եթե անգամ շահաբաժինները վճարվում են կամ չբաշխված շահույթը լրիվ կամ մասնակիորեն կազմված է այդ մյուս Պետությունում ձեռավորվող շահույթից կամ եկամտից:

Հոդված 11 ՏՈԿՈՄՆԵՐ

1. Մի Պայմանավորվող Պետությունում առաջացող եւ մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարվող տոկոսները կարող են հարկվել միայն այդ մյուս Պետությունում:

2. Սակայն նման տոկոսները կարող են հարկվել նաեւ այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ դրանք առաջանում են, այդ Պետության օրենսդրությամբ հաճապատասխան. բայց եթե ստացողը հանդիսանում է տոկոսների փաստացի սեփականատերը, ապա այդ կերպ գանձվող հարկը չպետք է գերազանցի տոկոսների հաճախառն գումարի 10 տոկոսը:

Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները այդ սահմանափակման կիրառման եղանակը սահմանում են փոխադարձ համաձայնությամբ:

3. «Տոկոսներ» տերմինը սույն Համաձայնագրում օգտագործելիս նշանակում է եկամուտ ցանկացած տեսակի պարտապահանջներից, անկախ հիփոթեքային ապահովումից եւ պարտապանի շահույթներին մասնակցելու իրավունքի առկայությունից, եւ մասնավորապես, եկամուտ կառավարական արժեթղթերից, փոխառության տոմսերից կամ պարտատոմսերից, ներառյալ այդ արժեթղթերին, փոխառության տոմսերին կամ պարտատոմսերին վերաբերող պարգևավճարներն ու շահումները: Սույն Համաձայնագրի նպատակների համար ժամկետանց վճարումների դիմաց գանձվող տուգանքները որպես տոկոսներ չեն դիտարկվում:

4. Սույն հոդվածի 1 եւ 2 կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, լինելով մի Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող Պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ այդ մյուս Պետությունում անկախ անձնական ծառայություններ է մատուցում այնտեղ գտնվող մշտական բազայից, եւ պարտապահանջը, որի հիման վրա տոկոսները վճարվում են, իրոք վերաբերում են

մման մշտական հաստատությանը կամ մշտական բազային: Այդ դեպքում կիրառվում են 7 կամ 14 հոդվածների դրույթները՝ կախված հանգամանքներից:

5. Համարվում է, որ տոկոսներն առաջանում են Պայմանավորվող Պետությունում, եթե վճարող է հանդիսանում ինքը՝ այդ Պետությունը, նրա իշխանության տեղական մարմինը կամ այդ Պետության ռեզիդենտը: Իսկ, եթե տոկոսներ վճարող անձը, անկախ այն բանից՝ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ է հանդիսանում թե ոչ, Պայմանավորվող Պետությունում ունի մշտական հաստատություն կամ մշտական բազա, որոնց առնչությամբ առաջացել է սխառոթը, որի տոկոսները վճարվում են, եւ այդ տոկոսների վճարման ծախսերը կրում է մման մշտական հաստատությունը կամ մշտական բազան, ապա համարվում է, որ մման տոկոսները առաջանում են Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը կամ մշտական բազան:

6. Եթե վճարողի եւ տոկոսների փաստացի սեփականատիրոջ միջեւ, կամ նրանց երկուսի եւ որեւէ երրորդ անձի միջեւ հատուկ հարաբերությունների պատճառով, վճարման համար հինք ծառայող, պարտապահանջին վերաբերող տոկոսների գումարը գերազանցում է այն գումարին, որը կհամաձայնեցվեր վճարողի եւ տոկոսների փաստացի սեփականատիրոջ միջեւ մման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարի ավելցուկային մասը առաջվա պես ենթակա է հարկման Պայմանավորվող Պետություններից յուրաքանչյուրի օրենսդրությանը համապատասխան, պատշաճ կերպով հաշվի առնելով սույն Համաձայնագրի մյուս դրույթները:

Հոդված 12 ՌՌՅԱԼՏԻ

1. Սի Պայմանավորվող Պետությունում առաջացող եւ մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարվող ժոյալտին կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն մման ժոյալտին կարող է հարկվել մաեւ Պայմանավորվող Պետությունում, որտեղ առաջանում են՝ այդ Պետության օրենսդրությանը համապատասխան. բայց եթե ստացողը հանդիսանում է ժոյալտի փաստացի սեփականատերը, ապա այդ դեպքում գանձվող հարկը չպետք է գերազանցի ժոյալտի ընդհանուր գումարի 10 տոկոսը:

Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները այդ սահմանափակման կիրառման եղանակը սահմանում են փոխադարձ համաձայնությամբ:

3. «Ռոյալտի» արտահայտությունը սույն Համաձայնագրում օգտագործելիս նշանակում է որպես փոխհատուցում ստացվող ցանկացած տեսակի վճարումներ գրականության, արվեստի եւ գիտության ստեղծագործության, ներառյալ կինոնկարները (կամ հեռուստա կամ ռադիո հաղորդումների համար օգտագործվող նկարները կամ կատետները), ցանկացած սրտենտի, առետրանիշի, դիզայնի կամ մոդելի, սլանի, գաղտնի բանաձեւի կամ գործընթացի հեղինակային իրավունքների օգտագործման իրավունքի տրամադրման, կամ օգտվելու համար, կամ արդյունաբերական, առետրային կամ գիտական սարքավորումների օգտագործման, կամ օգտվելու իրավունքի տրամադրման համար, կամ արդյունաբերական, առետրային, գիտական փորձին վերաբերվող տեղեկության համար:

4. Սույն հոդվածի 1 եւ 2 կետերի դրույթները չեն կիրառվում, եթե ժոյալտի փաստացի սեփականատերը, լինելով մի Պայմանավորվող Պետության ռեզիդենտ,

ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում ժողովրդին առաջացող մյուս Պայմանավորվող Պետությունում, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ այդ մյուս Պետությունում անկախ անձնական ծառայություններ է մատուցում այնտեղ գտնվող մշտական բազայից, եւ իրավունքը կամ գույքը, որոնց նկատմամբ վճարվում է ժողովրդին, իրոք կապված են այդպիսի մշտական հաստատության կամ մշտական բազայի հետ: Այդ դեպքում, կախված հանգամանքներից, կիրառվում են 7 կամ 14 հոդվածների դրույթները:

5. Համարվում է, ժողովրդին առաջանում է Պայմանավորվող Պետությունում, երբ ժողովրդի վճարող է հանդիսանում ինքը՝ այդ Պետությունը, նրա իշխանության տեղական մարմինը, կամ այդ Պետության ռեզիդենտը: Իսկ, եթե ժողովրդին վճարող անձը, անկախ այն բանից՝ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ է հանդիսանում թե ոչ, այդ Պետությունում ունի մշտական հաստատություն կամ մշտական բազա, որոնց կապակցությամբ ժողովրդի վճարելու պարտավորություն է առաջացել եւ այդ ժողովրդի վճարման ծախսերը կրում է այդ մշտական հաստատությունը կամ մշտական բազան, ապա համարվում է, որ ժողովրդին առաջանում է Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը կամ մշտական բազան:

6. Եթե վճարողի եւ փաստացի սեփականատիրոջ միջեւ կամ նրանց երկուսի եւ որեւէ երրորդ անձի միջեւ հատուկ հարաբերությունների պատճառով վճարման համար հինք ծառայող օգտագործմանը, իրավունքին կամ տեղեկությանը վերաբերող ժողովրդի գումարը գերազանցում է այն գումարը, որը համաձայնեցված կլիներ վճարողի եւ փաստացի սեփականատիրոջ միջեւ՝ այդպիսի հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարի ավելցուկային մասն առաջվա պես հարկվում է Պայմանավորվող Պետություններից յուրաքանչյուրի օրենսդրությանը համապատասխան, պատշաճ կերպով հաշվի առնելով սույն Համաձայնագրի մյուս դրույթները:

Հոդված 13

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ

1. Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող, 6 հոդվածում սահմանված անշարժ գույքի օտարումից ստացվող եկամուտները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սի Պայմանավորվող Պետության ձեռնարկության մյուս Պայմանավորվող Պետությունում ունեցած մշտական հաստատության ամբողջական գույքի կամ մի Պայմանավորվող Պետության ռեզիդենտի տրամադրության տակ անկախ անձնական ծառայություններ մատուցելու համար մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող մշտական բազային վերաբերվող շարժական գույքի օտարումից եկամուտները, ներառյալ, առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ միասին վերցրած այդպիսի մշտական հաստատության կամ այդպիսի մշտական բազայի օտարումից եկամուտները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում շահագործվող ծովային, գետային նավերի կամ օդանավերի, ավտոմոբիլային կամ երկաթուղային տրանսպորտային միջոցների կամ դրանց շահագործման հետ կապված շարժական գույքի օտարումից Պայմանավորվող Պետության ձեռնարկության կողմից ստացվող եկամուտները հարկվում են միայն այդ Պետությունում:

4. Գլխավորապես Պայմանավորվող Պետությունում գտնվող անշարժ գույքից ուղղակի կամ անուղղակի կազմված ակտիվներ ունեցող ընկերության բաժնետոմսերի

կամ այլ կորստրատիվ իրավունքների օտարումից ստացվող եկամուտները կարող են հարկվել այդ Պետությունում:

5. Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության գույքի, սույն հոդվածի 4-կետում չհիշատակված բաժնետոմսերի օտարումից եկամուտները կարող են հարկվել այդ Պետությունում:

6. Սույն հոդվածի 1, 2, 3, 4 եւ 5 կետերում չհիշատակվող, ցանկացած այլ գույքի օտարումից եկամուտները հարկվում են միայն այն Պայմանավորվող Պետությունում, որի ռեզիդենտն է գույքը օտարող անձը:

Հոդված 14

ԱՆԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սի Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից մասնագիտական ծառայությունների մատուցումից կամ անկախ բնույթի այլ գործունեությունից ստացվող եկամուտը հարկվում է միայն այդ Պայմանավորվող Պետությունում: Սակայն այդպիսի եկամուտը կարող է հարկվել մյուս Պայմանավորվող Պետությունում, եթե.

ա) մա ունի մյուս Պայմանավորվող Պետությունում իր գործունեությունը իրականացնելու նպատակների համար մատչելի մշտական բազա, կամ

բ) մա գտնվում է մյուս Պայմանավորվող Պետությունում ցանկացած տասներկուամսյա ժամկետի ընթացքում ընդհանուր առմամբ 183 օրը գերազանցող ժամկետի կամ ժամկետների ընթացքում, եւ միայն այդ մյուս Պետությունում մատուցված ծառայություններին վերաբերվող եկամուտի մասով:

2. «Մասնագիտական ծառայություններ» արտահայտությունը ներառում է, մասնավորապես, անկախ գիտական, գրական, դերասանական, կրթական կամ դասախոսական գործունեություն, ինչպես նաեւ բժիշկների, իրավաբանների, ինժեներների, ճարտարապետների, առանձնաբույժների, հաշվապահների եւ աուդիտորների անկախ գործունեություն:

Հոդված 15

ԿԱՆՅԱԼ ԱՆՉՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հաշվի առնելով 16, 18 եւ 19 հոդվածների դրույթները, վարձու աշխատանքի հետ կապված, մի Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից ստացվող աշխատավարձը, ռոճիկը եւ այլ նման վարձատրությունները, հարկվում են միայն այդ Պետությունում, եթե միայն վարձու աշխատանքը չի իրականացվում մյուս Պայմանավորվող Պետությունում: Եթե վարձու աշխատանքը իրականացվում է այդ կերպ, ապա դրա հետ կապված ստացվող վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Չմայած սույն հոդվածի 1 կետի դրույթներին, մի Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից ստացվող, մյուս Պայմանավորվող Պետությունում իրականացվող վարձու աշխատանքի հետ կապված, վարձատրությունը հարկվում է միայն առաջինը հիշատակված Պետությունում, եթե.

ա) ստացողը գտնվում է մյուս Պետությունում, տվյալ օրացուցային տարում սկսվող կամ ավարտվող ցանկացած տասներկուամսյա ժամկետի ընթացքում, ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամկետի կամ ժամկետների ընթացքում, եւ

բ) վարձատրությունը կատարվում է այդ մյուս Պետության ռեզիդենտ չհանդիսացող վարձողի կողմից կամ վարձողի անունից, եւ

с) վարձատրություն կատարելու ծախսերը չեն կրում մյուս Պետությունում վարձողի ունեցած մշտական հաստատությունը կամ մշտական բազան:

3. Անկախ սույն հոդվածի նախորդ դրույթներից, միջազգային փոխադրումներում Պայմանավորվող Պետության ձեռնարկության կողմից շահագործվող ծովային, գետային նավի կամ օդանավիատոմոբիլային ել երկաթուղային տրանսպորտային միջոցի վրա իրականացվող վարձու աշխատանքի հետ կապված ստացվող վարձատրությունը կարող է հարկվել այդ Պայմանավորվող Պետությունում:

4.

Հոդված 16 ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀՈՆՈՐԱՐՆԵՐ

Սի Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից՝ որպես մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության տնօրենների խորհրդի անդամ, ստացվող տնօրենների հոնորարները եւ այլ նման վճարումները, կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

Հոդված 17 ԱՐՎԵՍՏԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ ԵՒ ՄԱՐԶԻԿՆԵՐ

1. Անկախ 13 եւ 14 հոդվածների դրույթներից, մի Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից՝ որպես արվեստի աշխատող, ինչպես որ թատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության դերասանը, կամ երաժիշտը, կամ որպես մարզիկ, մյուս Պայմանավորվող Պետությունում որպես այդպիսին իրականացվող իր անձնական գործունեությունից, ստացվող եկամուտը, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Եթե արվեստի աշխատողի կամ մարզիկի իր այդ որակում իրականացվող անձնական գործունեությունից եկամուտը վերագրվում է ոչ թե իրեն՝ արվեստի աշխատողին կամ մարզիկին, այլ ուրիշ անձի, ապա, անկախ 7, 14 եւ 15 հոդվածների դրույթներից, այդ եկամուտը կարող է հարկվել այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ արվեստի աշխատողի կամ մարզիկի գործունեությունը իրականացվում է:

3. Սույն հոդվածի 1 եւ 2 կետերի դրույթները չեն վերաբերվում արվեստի աշխատողի կամ մարզիկի Պայմանավորվող Պետությունում իրականացվող գործունեությունից ստացվող եկամուտներին, եթե այդ Պետություն կատարված այցը ամբողջովին ֆինանսավորվում է մեկ կամ երկու Պայմանավորվող Պետությունների կամ նրանց իշխանության տեղական մարմինների հասարակական ֆոնդերից: Այդ դեպքում եկամուտը հարկվում է միայն այն Պայմանավորվող Պետությունում, ում ռեզիդենտն է հանդիսանում տվյալ արվեստի աշխատողը կամ մարզիկը:

Հոդված 18 ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

Հաշվի առնելով 19 հոդվածի 2 կետի դրույթները, Պայմանավորվող Պետության ռեզիդենտին՝ նրա նախկին վարձու աշխատանքի հետ կապված, վճարվող կենսաթոշակները եւ այլ նման վարձատրությունները ենթակա են հարկման այդ Պետությունում:

Հոդված 19
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

1. a) Պայմանավորվող Պետության կամ նրա իշխանության տեղական մարմնի կողմից կամ նրանց ստեղծած ֆոնդերից վճարվող, կենսաթոշակ չհամարվող վարձատրությունը ցանկացած ֆիզիկական անձի՝ այդ Պետությանը կամ իշխանության տեղական մարմնին մատուցած ծառայությունների առնչությամբ հարկվում է միայն այդ Պետությունում:

բ) Սակայն, այդպիսի վարձատրությունը հարկվում է միայն մյուս Պայմանավորվող Պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ Պետությունում եւ ֆիզիկական անձը հանդիսանում է այդ Պետության ռեզիդենտ, որը

(i) հանդիսանում է այդ Պետության քաղաքացի, կամ

(ii) չի դարձել այդ Պետության ռեզիդենտը միայն ծառայությունների մատուցման նպատակով:

2. a) Պայմանավորվող Պետության կամ նրա իշխանության տեղական մարմնի կողմից կամ նրանց ստեղծած ֆոնդերից ցանկացած ֆիզիկական անձին՝ այդ Պետության կամ նրա իշխանության տեղական մարմնին մատուցած ծառայությունների առնչությամբ, վճարվող ցանկացած թոշակ հարկվում է միայն այդ Պետությունում:

բ) Սակայն այդպիսի թոշակը հարկվում է միայն մյուս Պայմանավորվող Պետությունում, եթե ֆիզիկական անձը հանդիսանում է այդ Պետության ռեզիդենտ եւ քաղաքացի:

3. 15, 16 եւ 18 հոդվածների դրույթները կկիրառվեն Պայմանավորվող Պետության կամ նրա իշխանության տեղական մարմնի կողմից ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ կապված մատուցվող ծառայությունների առնչությամբ վարձատրման կամ թոշակների նկատմամբ:

Հոդված 20
ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

1. Մինչեւ անմիջականորեն մի Պայմանավորվող Պետություն ժամանելը մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող կամ հանդիսացած եւ առաջինը հիշատակված Պետությունում բացառապես սովորելու կամ կրթություն ստանալու նպատակով գտնվող ուսանողի կամ ստաժորի կողմից ստացվող վճարումները՝ մախատեսված ապրելու, սովորելու կամ կրթություն ստանալու համար, չեն հարկվում այդ Պետությունում, եթե այդ վճարումների աղբյուրները գտնվում են այդ Պետության սահմաններից դուրս:

2. Ուսանողին եւ ստաժորին վճարվող վարձատրությունները՝ մյուս Պայմանավորվող Պետությունում մատուցվող ծառայությունների համար, կախված հանգամանքներից, հնգամյա ժամկետ չեն հարկվի այդ Պետությունում, պայմանով, որ այդպիսի ծառայությունները կապված են նրանց կրթության, ապրուստի կամ ուսման հետ:

Հոդված 21
ԱՅԼ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ

1. Մի Պայմանավորվող Պետության ռեզիդենտի եկամուտների՝ սույն Համաձայնագրի մախորդ հոդվածներում չհիշատակված տեսակները, անկախ նրանց առաջացման աղբյուրից, ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

2. Սույն հոդվածի 1 կետի դրույթները չեն կիրառվում 6 հոդվածի 2 կետում սահմանված անշարժ գույքից եկամուտներից տարբեր այլ եկամուտների նկատմամբ, եթե նման եկամուտներ ստացողը հանդիսանալով մի Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող Պետությունում այնտեղ գտնվող մշտական ներկայացուցչության միջոցով կամ այդ մյուս Պետությունում մատուցում է անկախ անձնական ծառայություններ այնտեղ գտնվող մշտական բազայից, եւ գույքը կամ իրավունքը, որի առնչությամբ ստացվել է եկամուտը, իրոք կապված է այդպիսի մշտական հաստատության կամ մշտական բազայի հետ: Այդ դեպքում, կախված հանգամանքներից, կիրառվում են 7 կամ 14 հոդվածների դրույթները:

